

ԴԱԻԻԹ ԱՆՅԱՂԹԻՆ ՎԵՐԱԳՐՈՒԱԾ ԵՐԿՈՒ ՆԵՐԲՈՂՆԵՐ

ՄԻՆԱՍ ԳՈՃԱՅԵԱՆ

Հայ գրականութեան, ու յատկապէս բանաստեղծական լեզուի զարգացման համար հետաքրքրական են Դաւիթ Անյաղթին վերագրուող ոչ-փիլիսոփայական բնոյթի երկու ներբողներ:

Հայ եւ օտար բանասիրութեան մէջ կը շարունակուին յայտնուիլ Անյաղթի անձին եւ ժառանգութեան վերաբերեալ տեսակէտներ, որոնք երբեմն զիրար կը հակասեն, երբեմն ալ՝ կ'ամբողջացնեն:

Խնդրոյ առարկայ՝ «Ներբողեան ի Ս. Խաչն Աստուածընկալ»¹ եւ «Ներբողեան ի Ս. Կաթողիկէ Եկեղեցի»² ներբողները նոյնպէս երբեմն կը վերագրուին փիլիսոփային, իսկ երբեմն ալ կը նկատուին անոր գրչին անհարազատ ստեղծագործութիւններ:

Ըստ աւանդական տեսակէտին, «Խաչի Ներբողեան»-ը կը պատկանի Դաւիթ Անյաղթին: Ասոր կողմնակիցները իբրեւ հիմք կ'ընդունին «Նախագրութիւն Ներբողենի Խաչին», «Թուղթ Գիւտայ առ Դաւիթ» եւ «Ընկալեալ զԹուղթն Թախանձանաց Դաւիթ Առնէ Անդրէն եւ Անդրադարձ Պատասխանին»³ վերնագիրները կրող գրութիւններուն մէջ

1. Կորիւն Վարդապետի, Մամբրէ Վերձանողի եւ Դաւիթ Անյաղթի Մատենագրութիւնք, Վեմետիկ, 1833, էջ 103-119:

2. Հայր Պօղոս Անանեան, Դաւիթ Անյաղթի Անտիպ Մէկ ձառք, «Բազմավէպ», 1956, Ապրիլ-Մայիս, էջ 92-94:

3. Կորիւն Վարդապետի, Մամբրէ..., էջ 113:

տրուած այն տեղեկութիւնները, որոնք կը նկարագրեն ներքողին արտասանուելուն զրդապատճառներն ու հանգամանքները: Ըստ այդ գրութիւններուն, Գիւտ կաթողիկոսի (461-478 թթ.) օրօք, երեք անձնաւորութիւններ Հայաստան կու գան եւ կ'ըսեն թէ Մարիամը աստուածածին չէ, իսկ խաչն ալ՝ Աստուծոյ խաչը չէ, այլ՝ գողերու պատժարան: Կաթողիկոսը երբ կ'իմանայ թէ հռչակուած Անյաղթը Հայաստան կը գտնուի, թուղթ կը գրէ եւ կը խնդրէ իրմէ ներքող մը գրել խաչի մասին:

Վարդան պատմիչ նոյնպէս «Ուաչի ներքողեան»ի իր «Պատճառ»ին մէջ, գործը Անյաղթին կը վերագրէ ըսելով. «Այլ գտի յօրինակս հինս մերձ առ թարգմանութիւնս գրեալ, եթէ սա էր աշակերտեալ մեծին Մովսիսի քերթողին...ի հայրապետութեան Գիւտի եւ զկնի Յօհանայ Մանղակունւոյ»⁴:

Աւանդական տեսակէտի պաշտպաններն են Ն. Ակինեան⁵, Բ. Սարգիսեան⁶, Հ. Պ. Անանեան⁷, եւ Ա. Ն. Մուրատեան⁸:

Աւանդական տեսակէտին հակադրուողները ցարդ հանգամանալից կերպով չեն շարադրած իրենց տեսակէտը, այլ, ի միջի այլոց՝ ականարկութիւններ ըրած են այդ մասին:

Երկրորդ ճառը՝ «Ներքողեան ի Ս. Կաթողիկէ Եկեղեցի»ին, գիտական շրջանառութեան մէջ դրած է Հ. Պ. Անանեան 1956 թ.⁹ մինչ այդ անիկա պարզապէս կը յիշուէր ձեռագրաց ցուցակներու մէջ: Այս ուշագրաւ ուսումնասիրութենէն բացի, ներքողի՝ Անյաղթի հարազատ գործ ըլլալու կապակցութեամբ նոյնպէս պէտք եղած աշխատանքը չէ տարուած:

Ամփոփ կերպով՝ ցարդ յայտնուած են հետեւեալ տեսակէտները. —

1) Բ. Սարգիսեան Անյաղթի հարազատ գործ կը նկատէ եւ նոյնիսկ «Ուաչի Բարձրացուցէքի հետ աղերս ունի», կ'ըսէ¹⁰:

2) Գ. Զարպհանալեան տարակոյս կը յայտնէ ըսելով. «Որչափ ալ ոճոյ նմանութիւն են թաղրենք գտնել այս ճառին եւ իր (Դաւիթ

4. Հայր Ն. Ակինեան, Դաւիթ Հարթացի, Անյաղթ Փրիստոփայ, Վիեննա, 1959, էջ 51:

5. Նոյնը:

6. Բարսեղ Վրդ. Սարգիսեան, Մայր Յուցակ Հայերէն Ձեռագրաց Մատենադարանին Մտիթարեանց Ի Վեներիկ, Բ. հտր., Վենետիկ, 1924, էջ 337:

7. Հ. Պ. Անանեան, նշ. աշխ.:

8. Ա. Ն. Մուրատեան, Դաւիթ Անյաղթի Անձնաւորութեան, Ժամանակի, եւ Գիտական Ժառանգութեան Հարցի Շուրջը, «Պատմա-Բանասիրական Հանդէս», 1981, քիւ 1, էջ 194:

9. Հ. Պ. Անանեան, նշ. աշխ.:

10. Բ. Սարգիսեան, նշ. աշխ., էջ 337:

Անյաղթի, Մ. Գ.) անունը կրող ուրիշ երկասիրութեանց մէջ, բայց հարազատութիւնը տարակուսական կը մնայ»¹¹:

3) Հ. Պ. Անանեան կարգ մը ապացոյցներով այն համոզումը կը յայտնէ, թէ այս ճառին եւ նախորդին հեղինակը Անյաղթն է¹²:

4) Տողերուս հեղինակը իր դոկտորական թեզին մէջ կարգ մը լրացումներ աւելցնելով Հ. Պ. Անանեանի փաստարկումներուն վրայ, կը փորձէ ցոյց տալ, որ այս երկու գործերը նոյն գրիչի արդիւնք են¹³:

Սոյն յօդուածը վերջին տարիներուն մեր կատարած պրպտումներուն արդիւնքն է, զոր տպագրութեան կը յանձնենք՝ հաւատացած ըլլալով որ ան կ'օգնէ լուսարանելու այս բանավիճային խնդիրը:

«ՆԵՐՐՈՂԵԱՆ Ի ՍՈՒՐԲ ԽԱԶՆ ԱՍՏՈՒԱՅԸՆԿԱԼ» ՃԱՌԸ

Եթէ հաւատալու ըլլանք ներբողին սկիզբը գտնուող երեք գրութիւններուն, ստիպուած կ'ըլլանք ընդունիլ, թէ՛

1) Դաւիթ Անյաղթն է ներբողին հեղինակը,

2) Ներբողը գրուած է 460-ական թուականներուն, քանի որ Գիւտ՝ կաթողիկոս ձեռնադրուած է 460 թ.ին:

Սակայն ներբողին ուսումնասիրութիւնը՝ գրութեան ժամանակի հարցին շուրջ, այլ եզրակացութիւններու կը հասցնէ մեզ: Այսպէս՝

1) Ներբողին մէջ յստակօրէն կը պաշտպանուի Մարիամի աստուածածին ըլլալը. «Աստուած անպարագրելի եւ անբաւ, եւ յարգանքի կուսին բառնիլ կրիւր ըստ մարմնոյ, եւ մարդկապէս առ ծնունդս մերձելոյ, ըստ որում աստուածածին ծնողն, եւ նոյն ծնեալն Աստուած անպարագրելի անբաւ»¹⁴:

2) Ուրիշ տեղ մը խաչը կը պաշտպանուի աղանդաւորներու յարձակումներէն «որք (աղանդաւորները, Մ. Գ.) ոչ կամելով հետեւիլ խաչին, այլազգարար խորհին. քանզի ուր խաչ՝ անդ եւ խաչեցեալն, եւ ուր խաչեցեալն՝ անդ եւ խաչելութիւն...: Արդ ուրեմն, ասելով խաչ աստ իմասցի Գողգոթայ, եւ ասդէն խաչելութիւն, աստ զենումն, եւ ի սմին փրկագործութիւն»¹⁵:

11. Գ. Զարպիանայեան, Հայկական Հին Դպրութեան Պատմութիւն, Վեներտիկ, 1886, էջ 302:

12. Հ. Պ. Անանեան, նշ. աշխ., էջ 92-96:

13. Մինաս Գոնայեան, Վեցերորդ Դարու Հայ Գրականութիւնը, (Ատոռոսփերատ), Երեւան, 1980 (ռուսերէն):

14. Կորին Վարդապետի, Մամբրէ..., էջ 108:

15. Նոյնը, էջ 109:

Այդ ո՞ր աղանդաւորներն էին, որոնք իրենց յարձակման թիրախ դարձուցեր էին խաչն ու խաչելութիւնը, եւ Աստուածածնի աստուածածին ըլլալը: Եւ թէ անոնք յատկապէս ե՞րբ զօրացուցեր էին իրենց պայթարը:

Դատելով Կիրակոս Գանձակեցիի հաղորդումներէն, վեցերորդ դարուն աւելի վտանգաւոր դարձեր էին նեստորականները, որոնք «թարգմանեցին զնոսա սուտ գիրս զԳորտոսակ, զԿիրակոսակ... եւ զաւետարանի մեկնութիւն Մանեայ...»¹⁶: Թուարկուած գիրքերը, ըստ քրիստոնէական աստուածաբանութեան, մանիքէական աղանդի գիրքեր են, եւ ոչ թէ նեստորական: Այս «սուտ գիրս» կոչուածներուն մէջ մանիքէականները կը մերժեն եկեղեցիին որդեգրած ու պաշտպանած հաւատալիքներն ու դաւանանքը, որոնց կարգին, նաեւ Մարիամի աստուածածին ըլլալն ու խաչին փրկարար դերը:

Ներբողի նախաբանին մէջ կ'ըսուի թէ այն երեք աղանդաւորները նոյնպէս չէին ընդուներ Մարիամի աստուածածին ըլլալն ու խաչի փրկարար դերը: Այսպիսով, Անյաղթին վերագրուած ներբողը գրուած կ'ընայ ըլլալ վեցերորդ դարուն՝ յարձակումները սաստկացուցած մանիքէական աղանդաւորներուն դէմ:

ՈՃՆ ՈՒ ԼԵԶՈՒՆ

«Ներբողեան ի Սուրբ Խաչն Աստուածընկալ» ճառը ջատագովութիւն մըն է խաչի մասին, սակայն, միեւնոյն ատեն նաեւ մեկնութիւն մը, ուր կ'արտայայտուին իմաստասիրական եւ աստուածաբանական դատողութիւններ՝ յատկանիշեր, որոնց առկայութիւնը պայմանաւորուած է Հեղինակին հիմնական նպատակով, այն է՝ հակահարուած տալ հակառակորդներուն: Այսուհանդերձ ներբողը գեղարուեստական գեղեցիկ ստեղծագործութիւն մըն է:

Հեղինակին ջատագովութիւնը նման չէ միջնադարեան բազմաթիւ անհրապոյր, անարուեստ, չոր ու ցամաք մեկնութիւններու: Հեղինակը կը փայլի թէ՛ իբրեւ ճարտասան, թէ՛ իբրեւ քերթող եւ թէ՛ իբրեւ փիլիսոփայ: Այս երեք յատկանիշներն ալ նպաստած են որպէսզի ներբողը նկատուի Անյաղթի ստեղծագործութիւն:

Ուշագրաւ երեւոյթ մը եւս. ճարտասանին մէջ կը նկատուին նորարական միտումներ՝ միջնադարեան գրականութեան այս սեռին մշակման մէջ: Օրինակ, ամբողջ հատուածի մը մէջ նախ կը հիմնաւորէ

16. Կիրակոս Վարդապետի Գանձակեցւոյ Համառօտ Պատմութիւն, Վենետիկ, 1865, էջ 29:

խաչի գոյութեան անհրաժեշտութիւնն ու դերը՝ ըստ քրիստոնէական կրօնքի սկզբունքներուն, ապա կ'անցնի գովասանութեան, որ ճառին ամենահմայիչ մասն է: Հոս է որ ի յայտ կու գան ճարտասան հեղինակին քերթողական ունակութիւնները: Վերջին համգամանքն ու իմաստասիրական խոր գիտելիքներով օժտուած ըլլալու փաստը կը խօսին Անյաղթի օգտին:

Ներբողին մէջ իրարու կը յաջորդեն բազմերանգ պատկերներ, որոնց կարեւոր մէկ մասը նորութիւն էր միջնադարեան հայ մատենագրութեան համար: Ահաւասիկ գեղեցիկ պատկեր մը. տեղ մը խաչը կը համեմատուի ծառի հետ, որ բուսեր է երկրի վրայ, սակայն քանի որ զայն շալկեր է անտեսանելին՝ Քրիստոս, խաչափայտին թեւերը հասեր են երկինքի կամարներուն՝ լեցնելով երկինքին ու երկրին միջեւ եղած անհուն տարածութիւնը:

Ինքնատիպ է նաեւ խաչի եւ կարթի համեմատութիւնը: Քրիստոնէական կրօնքին համաձայն, Քրիստոս խաչուելով, մարդկութիւնը փրկեց անխուսափելի կորուստէ. ասիկա, ինչպէս գիտենք, քրիստոնէութեան կարեւորագոյն ելակէտներէն մէկն է: Ամբողջ մարդկութեան համար Միածին Որդիին յանձն առած զոհողութիւնը կը նմանցուի փրկարար կարթի, որ մարդոց հոգիները մահէն դէպի կեանք ձգեց.

«Օրհնեալ ես, փայտ սուրբ, որ ի շրջանասոյգ պտոյտս յորձանուտ կենացս, իբր ի կարթ ի ներքս արկար ի մահուանէ ի կեանս զմարդիկ ձգեցեր...»¹⁷:

Ճառագիրը բանաստեղծական խօսքի վարպետ է: Միեւնոյն միտքը ան կրնայ արտայայտել գեղարուեստական տարբեր պատկերներով, որոնք շօշափելի են եւ հիւթեղ: Ահաւասիկ ուրիշ օրինակ մը, ուր այս անգամ խաչը կը համեմատուի հնձանի հետ.

«Օրհնեալ ես, փայտ սուրբ, իմանալի հնձան, քանզի քեզ ի նոյնում վերայ երկնայինն այն ճմլեցաւ ողկոյզ բաւական յուրախութիւն երկնայնոցն եւ երկրայնոցս. այն որ ի ներքս ի խոնարհ զկենաց մերոց զթշնամին իբրեւ զհնձան կոխեալ սրտմտութեամբ զնորայն ի յերկիր եհեղ զմաղձ»¹⁸:

Քերթողական արուեստին հմուտ ճառագիրը չի բաւարարուիր խաչի համեմատութիւններով, իր մէջ դեռ կուտակուած է պոռթկում մը եւս՝ Փրկիչին մեծագոյն զոհողութեան գնահատականը, զոր հեղինակը կը նկարէ բազմերանգ երանգապնակին ամենաճոխ գոյներով.

«Օրհնեալ ես, փայտ սուրբ, անբարբառ բարեխաւս... մարտիրոսաց

17. Կորին Վարդապետի, Մամբրէ..., էջ 114:

18. Նոյնը, էջ 116-117:

պսակ, քահանայից շնորհարաշխութիւն... թագաւորաց յաղթանակ, իշխանաց քաջութիւն, քրիստոսասէր զաւրաց յառաջապահեստ, ախոյանաց քաջալերութիւն, նահատակաց զաւրավիգն, մեծատանց զգուշացուցիչ... անզգամաց զգաստութիւն»¹⁹:

«ՆԵՐՔՈՂԵԱՆ Ի ՍՈՒՐՔ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻ» ՃԱՌԸ

Հ. Պ. Անանեան վերոյիշեալ ճառն ու նախորդը Դաւիթ Անյաղթի հարգատ գործ կը նկատէր: Որքան ալ ոմանց համար տարակուսական թուին բերուած փաստերը, մենք ճշմարտութեան հատիկ կը տեսնենք իր յայտնած տեսակէտին մէջ, որ հետեւեալն է. երկու ներքողներն ալ միեւնոյն գրիչի արդիւնք են: Քիչ ետք, յենելով երկու ներքողներուն լեզուաւոճական զուգահեռ համեմատութեան վրայ, պիտի տեսնենք, թէ անոնք միեւնոյն հեղինակին՝ Անյաղթին մտքին ու հոգիին արգասիքն են:

Մինչ այդ անդրադառնանք ուրիշ կարեւոր հարցի մը՝ ներքողի գրութեան ժամանակին:

Խնդրոյ առարկայ ճառին մէջ նոյնպէս կը խօսուի մանիքէական աղանդին մասին. այս հանգամանքը կրնայ օգնել գրութեան ժամանակը որոշելու աշխատանքին:

Հոս՝ ճառին հեղինակը բուռն կերպով կը պաշտպանէ Հայ Եկեղեցին աղանդաւորներու յարձակումներէն եւ կը պայքարի եկեղեցւոյ դերը նուաստացնել փորձող ճիգերու դէմ: Անոնք, կ'ըսէ հեղինակը, «աւտարացեալք ի մերակայիցս որ փոքրացուցեալ նրբագոյն որոցից նմանն կամ ժողովրդոց սահմանն զանբաւութիւն լայնութեան նորա»²⁰: Ուրիշ տեղ մը զանոնք խստագոյնս դատապարտելով կ'աւելցնէ. «աւտարացեալք Մանիքեցիք նմանաւրէն սէր կոչեն զազրութիւն գործոց՝ միմեանց շնորհուկս առնելով, եւ յայն դաւանեալ հաւատէն որ սպանանէ առաւել զսուր երկսայրի»²¹: Ապա հեղինակը կոչ կ'ընէ հեռու մնալ անոնցմէ եւ հալածել զանոնք:

Մանիքիէական աղանդը, ինչպէս տեսանք նախորդ ճառի կապակցութեամբ, Հայաստանի մէջ աւելի վտանգաւոր դարձեր էր վեցերորդ դարուն. այս մասին կը վկայէր Կիրակոս Գանձակեցին. բացի այդ, «Գիրք Թղթոց»ի վեցերորդ դարուն պատկանող թուղթերուն մէջ վեց անգամ կը յիշատակուի եւ կը նշուի աղանդի հիմնադիրը՝ Մանին²²:

19. Նոյնը, էջ 117-118:

20. Հ. Պ. Անանեան, նշ. աշխ., էջ 93:

21. Նոյնը:

22. Գիրք Թղթոց, էջ 46, 53, 56, 83:

Այսպիսով, ներբողին գրութեան ժամանակը կը համընկնի այն շըրջանին, երբ մանիքէական եւ այլ աղանդներ սկսեր էին Հայաստան թափանցել բուն քափով: Անոնք, յատկապէս մանիքէականք, կը ժըխտէին կամ կը նուաստացնէին խաչը, եկեղեցւոյ դերը, Մարիամի աստուածածին ըլլալը եւ այլն: Երկու ներբողներուն հեղինակը մեծ ջանքեր կը թափէ պաշտպանելու համար մանիքէական աղանդին կողմէ յարձակման թիրախ հանդիսացող եկեղեցւոյ կարգ մը սրբազան սկըզբունքները: Ուստի, այս երկու ներբողներն ալ ժամանակի առումով չափազանց մօտ են իրարու:

Բարսեղ Սարգիսեան եւ Հ. Պ. Անանեան արդէն սրամիտ կերպով նկատեր էին, որ «Ներբողեան ի Սուրբ Կաթուղիկէ Եկեղեցի» ճառին մէջ տեղ մը ակնարկութիւն կ'ըլլայ խաչի շնորհներուն մասին, եւ հեղինակը չ'ուզեր շարունակել կամ կրկնել նոյն խօսքերը, այսինքն՝ «Չնորհս եկեղեցւոյ ընդ նախ երգ ի նոյն երկրորդեսցուք նշանի սուրբ խաչին»²³, որոնք անգամ մը արդէն իսկ ըսուած եւ թուարկուած են նախապէս՝ «Ներբողեան ի Սուրբ Խաչն Աստուածընկալ»ին մէջ:

Այս երկու ներբողներուն լեզուաոճական քննութիւնն ալ ցոյց կուտայ որ միեւնոյն գրիչի արդիւնքն են քննուող ճառերը. ոչ մեծ դժուարութեամբ կարելի է նկատել թէ արտայայտուած պատկերները միեւնոյն գեղարուեստական ճաշակի ակունքներէն կը բխին: Ահաւաստիկ հատուած մը.

ՆԵՐԲՈՂԵԱՆ Ի Ս. ԿԹՂ. ԵԿՂԾ. ՆԲՂ. Ի. Ս. ԽԱԶՆ

ԱՍՏՈՒԱԾՐՆԿԱԼ

«Ոոստովանողաց քաղաք ամբողջեան, մեռելոց յիշատակախնդիր, սգաւորաց մխիթարութիւն... ծերոց սփոփութիւն, մանկամարդ երիտասարդաց՝ հոգեւոր վարժարան, կուսանաց մարգարտազարդ ընդ անձամբ արկեալ...: Նեղելոց նաւահանգիստ, ճանապարհորդաց երթ ի դարձ խաղաղութեան... տղայոց դաստիարակ, սատանայի սատակիչ...»²⁴:

«Կուսանաց գարդ, ամուսնացելոց կնիք: Տղայոց պահապան, մանկանց դաստիարակ, ծերոց ժողովարան, նախապահորդաց առաջնորդ, աշխատացելոց հանգիստ, նաւելոց նաւահանգիստ, ախտացելոց բժշկութիւն, դիւաց ահարկու...»²⁵:

23. Հ. Պ. Անանեան, նշ. աշխ. էջ 93:

24. Նոյնը, էջ 94:

25. Կորիւն Վարդապետի, Մամբրէ... էջ 118:

«Ներբողեան ի Սուրբ Կաթուղիկէ Եկեղեցի» ճառը գեղարուեստական գործ է նախորդին պէս, եւ դաւանարանական այլ ճառերէ կ'առանձնանայ պատկերաւոր մտածողութեան առատութեամբ, լեզուի յստակութեամբ, հոետորական ոճով եւ նորաստեղծ գեղեցիկ բառերով:

Ներբողը ունի կառուցուածքային այսպիսի իւրայատկութիւն. հեղինակը նախ հոետորական ոճին յատուկ կոչով, ապա՝ պատկերաւոր նկարագրութիւններու գեղումով կը գովերգէ եկեղեցին: Այնուհետեւ, մերթ ընդ մերթ, մէջբերելով աղանդաւորներու արտայայտած կարգ մը գաղափարները, կը քննադատէ ու կը հերքէ զանոնք: Հեղինակը, ցոյց տալով անոնց ըսածներուն եւ ճշմարտութեան միջեւ ծագած հակադրութիւնը, ընթերցողը կ'առաջնորդէ դէպի ժխտական վերաբերմունք՝ աղանդաւորներու հանդէպ, եւ կը գոչէ. «յաւտարաւտաց անտիխորհեսցուք», ու նորէն բանաստեղծական գեղումով կը փառաբանէ եկեղեցին:

Ներբողի կառուցուածքային այս կմախքը շատ կը յիշեցնէ նախորդինը, ուստի այս մէկը նոյնպէս կրնայ վկայել երկու ներբողներուն միեւնոյն հեղինակի գրչին պատկանելու օգտին:

ՈՃՆ ՈՒ ԼԵԶՈՒՆ

Քննարկուող ճառը պատկերաւոր մտածողութիւններու եւ նկարագրութիւններու համադրում մըն է. կարելի է առանձնացնել կարգ մը հատուածներ, որոնք արձակ բանաստեղծութեան գեղեցիկ նմուշներ են: Հեղինակի պատկերաւորման կառոյցին մէջ կը շեշտուի բնութեան հետ համեմատութիւնը: Այսպէս՝ եկեղեցին ամէն ինչի ե'ւ սկիզբն է ե'ւ կեդրոնը, անիկա յաւերժ երիտասարդ է, հոն միշտ գարունն է որ կը տիրապետէ, անոր շուրջ կը պտըտին «արեգակն բարձրագոյն լուսնի բոլորակն երեւելագոյն», իսկ երկինքի աստղերը անոր շուրջ պար բռնած, կը բոլորազարդեն Աստուծոյ տունը: Բնութեան գեղեցկութիւնները՝ երկինքը, արեւը, լուսինն ու աստղերը, դաշնաւորուած ծովեզրի հետ, կը հաստատեն Արարիչին ստեղծագործութիւնը, կը փառաւորեն Անոր տունն ու հոգիներու ծննդավայրը: Բնութիւնը իր հրաշալիքներով կը նորոգէ եկեղեցին՝ «գպայծառութիւն հրոյ նորոգման քո եւ զանխոով խաղաղութիւն ի հաւրէ ի քեզ հաստատեալ»²⁶:

26. Հոս պէտք է աւելցնել թէ վեցերորդ եւ եօթներորդ դարերուն ստեղծուած բնարական քնոյթի կարգ մը շարականներու մէջ կը սկսին երեւալ քնոյթեան երեւոյթներու հետ (արեւ, լուսին, աստղ, մոլորակ...) կատարուած համեմատութիւններ: Հետաքրքրական

Ճառի պատկերաւորման ձեւերուն մէջ կարեւոր տեղ կը բռնեն այլաբերութիւնն ու համեմատութիւնը, որով որոշակի եւ կենդանի կը դառնայ գեղարուեստական պատկերը. այսպէս, օրինակ, խօսելով հաւատքէ թուլցած, անհաստատ ու երբեք մարդոց մասին, կ'ըսէ. «Իսկ որ հատանել տան զգլուխ իւրեանց կամ վիրաւորել զհաստատութիւն նոցա սրտի, ոչ աւգուտ է զեղ բժշկութեան»: Ուրիշ տեղ մը՝ փոխանակ ըսելու որ Լուսաւորիչը անհաւատներուն գիտութիւն կը ջամբէ, կ'ըսէ. «Բանայր զխոպանացեալ եւ զվիմափակ լսելարանս նոցա»:

Ինչպէս կը տեսնենք այս քանի մը օրինակներէն, ճառագիրը տիրապետած է գեղեցիկ գրելու արուեստին: Բռնագրօսիկ եւ արհեստական չեն պատկերաւորման իր ձեւերը: Ի հակադրութիւն միջնադարու կարգ մը ճառագիրներու, որոնք թէեւ կ'օգտագործեն սուրբ գրային պատկերներ, սակայն իրենց գործը կը վերածուի սոսկ կրկնութեան ու երբեմն կապկումի, հետեւաբար՝ արուեստագուրկ գրութեան:

Ճառագիրը պատկերներու օգտագործման մէջ շատ զուսպ է, բայց՝ տեղին: Ան չի սիրեր երկար ու դարձդարձիկ նկարագրութիւններ, աստուածաշնչային պատկերներու անընդհատ կրկնում եւ վերարտադրութիւն:

Այսպէս՝ երկու ներբողները մէկ հեղինակի գրչին ըլլալու վարկածը, — միջնադարէն ի վեր ան նկատուած է Դ. Անյաղթ, — զուրկ չէ հիմքէ: Անյաղթ այն զէմքն էր, որ կրնար գրել նմանօրինակ գեղեցիկ ճառեր. իր իմաստասիրական բնոյթի աշխատութիւններն ու մեկնութիւնները նոյնպէս ունին գեղարուեստական լեզուամտածողութեան բազմաթիւ տարրեր: Երկու ներբողներն ալ արուեստի տեսակէտէն յաջող, ու քնարական շունչով գրուած գործեր են՝ միջնադարեան այն լաւագոյն արձակ գործերէն, որոնք ձեւի եւ բովանդակութեան տեսանկիւնէն զիտուած՝ օրինակելի ճառեր են հանդիսացեր հայ մատենագրութեան առաւել յայտնի ճառագիրներու համար, ինչպէս օրինակ պարագան Յովհան Մայրագոմեցիին, որուն գործերուն մէջ նկատելի կերպով կան քնարական եւ վիպական տարրեր²⁷: Մայրագոմեցին ստեղծագործաբար իւրացուցած է նաեւ հոս քննարկուող ներբողներուն հեղինակին

կ'ըլլայ հոս նշել թէ այսպիսի համեմատութիւններ հայկական էին հաւատալիքներու վերապրուկներ են, որոնք կ'օգտագործուին երկու ներբողներու հեղինակին կողմէ: Այս փաստը կը վկայէ հեղինակին՝ ժողովրդական հաւատալիքներուն եւ բանահիւսութեան հետ ունեցած կապին մասին: Այսպիսով կը բացատրուի հեղինակին աշխարհայեացքին մէկ կարեւոր կողմը:

27. Տես՝ Յովհան Մայրագոմեցի՝ Միջնադարու Մեծ ճառագիրը, «Հայկագեան Հայագիտական Հանդէս», Ե. հտր., Պէյրութ, 1974, էջ 213-214:

յատկանիշերէն մէկը՝ առաջին իսկ տողերէն ընթերցողին մէջ հեղինակին հանդէպ վստահութիւն ստեղծելու գաղտնիքը:

Երկու ներբողներուն հեղինակը՝ Դաւիթ Անյաղթ, ճառի սեռի մշակման լաւագոյն մշակներէն է. ան ամուր օղակ մըն է Մաշտոց, Մանդակունի, Մայրագոմեցի շղթային մէջ:

TWO EULOGIES ATTRIBUTED TO DAVID ANHAGHT

MINAS KODJAYIAN

(Summary)

The two Armenian eulogies, the "Eulogy for the Cross", and the "Eulogy for the Holy Universal Church" traditionally have been attributed to the fifth-century philosopher David Anahgt. However, this view has been seriously challenged. The author of the article, after stressing the philosophical and theological aspects of the poems and their artistic literary language, concludes that they must have been written by David Anahgt.